«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

«ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ՝

«ՀՀ արդարադատության նախարարության 2024թ. բյուջետային հատկացումների և դրանց հաշվին կատարված պետական գնումների միջև համադրական վերլուծություն»
Ծրագրի

*Սույն զեկույցը կազմվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոպ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում՝ «Արդարության տուն» իրավապաշտպան ՀԿ կողմից իրականացվող՝ «ՀՀ արդարադատության նախարարության 2024թ. բյուջետային հատկացումների և դրանց հաշվին կատարված պետական գնումների միջև համադրական վերլուծություն» վերտառությամբ ծրագրի (հետայսու նաև՝ **Ծրագիր**) շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Արդարության տուն» իրավապաշտպան ՀԿ, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները*

Կատարողներ՝
Ծրագրի ղեկավար՝ Թերեզա Գալստյան
Ծրագրի համակարգող՝ Էլիտա Բաբայան
Ծրագրի երիտասարդ մասնագետ՝ Անի Խաչատրյան
Ծրագրի փորձագետ՝ Ռաֆաել Համբարձումյան

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

<u>ՆԱԽԱԲԱՆ</u>

«ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» իրավապաշտպան ՀԿ-ն՝ «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակում իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության (հետայսու նաև՝ **Նախարարություն**) 2024 թվականի բյուջետային հատկացումների և դրանց հաշվին կատարված պետական գնումների միջև համադրական վերլուծություն: Ծրագիրն իրագործվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցության արդյունքում:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել արդարադատության ոլորտի մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության բարձրացմանը՝ բյուջետային հատկացումների և պետական գնումների միջև փոխկապակցվածության վերլուծության միջոցով: Պետական մարմինների գործունեության, մասնավորապես՝ պետական գնումների գործընթացներում կատարված ծախսերի նկատմամբ հանրային հսկողությունն իրականացվում է ի խթանում ՀՀ-ում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների դերի բարձրացման՝ որպես հանրային հսկողության և կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ:

Ծրագրի միջոցով ակնկալվում է ձևավորել հանրային գիտակցում այն մասին, թե ինչպես են բաշխվում և օգտագործվում հանրային ֆինանսական միջոցները, ինչպես նաև բարձրացնել պետական կառույցների հաշվետվողականությունը և խթանել պետական ծախսերի նկատմամբ հանրային վերահսկողական գործիքակազմի լավարկումն ու արդյունավետությունը:

Պետական մարմինների գործունեության, մասնավորապես՝ պետական գնումների գործընթացներում կատարված ծախսերի նկատմամբ հանրային վերահսկողությունն իրականացվում է ի խթանում ՀՀ-ում պետական գրանցում ստացած

հասարակական կազմակերպությունների դերի բարձրացման՝ որպես հանրային հսկողության և կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ:

Պետական գնումների գործընթացներում կնքված պայմանագրերի կատարման և կառավարման շրջանակներում՝ ՀՀ-ում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների դերի բարձրացման ու տվյալ ինստիտուտի առհասարակ ամրապնդման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ պետական միջոցների հաշվին պետական գնումների շրջանակներում ձեռք բերվող աշխատանքների, ապրանքների և ծառայությունների՝ պահանջարկ - ձեռքբերում - սպառում - ընդունում հարաբերակցության նկատմամբ հանրային հսկողությունը չնայած որ նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ, սակայն փաստացի դրա սակավ կիրառությունը կարող է բերել և փաստացի հաճախ բերում է ՀՀ պետական միջոցների ոչ նպատակային և անհարկի օգտագործման (վատնման), ինչպես նաև ՀՀ պետական գնումների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի աճին:

Ծրագրի հնարավոր, միաժամանակ, կարևորագույն ձեռքբերումն ենք համարում այն, որ Ծրագրի միջոցով ակնկալվում է ձևավորել հանրային համընդհանուր մտածողություն այն մասին, որ հասարակությունը կարո՞ղ է և պե՞տք է պահանջատեր լինի, որպեսզի պետական կառավարման մարմիններն է՛լ ավելի բաց լինեն՝ բյուջեի հաշվին կատարված ծախսերը հանրայնացնելու ու հաշվետու լինելու առումով, քանի որ պետական գնումների գործընթացներում կնքված պայմանագրերի կատարման և կառավարման հասարակական հսկողությունը հանդիսանում է նաև ժողովրդավարության էլեմենտ, ու հենց դրանով է պայմանավորված, որ պետական կառավարման մարմինների կողմից բյուջեի ծախսերի նկատմամբ հսկողության միջոցով, փաստորեն, ժողովուրդը ոչ անմիջականորեն՝ ածանցյալ ձևով մասնակցում է պետական կառավարմանը:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագրի արդյունքների շարունակականությունն ապահովելու նպատակով Կազմակերպությունն ապահովելու է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով նախատեսված՝ պայմանագրերի հանրային հսկողության իրականացման օրենսդրական մեխանիզների վերաբերյալ հանրային իրազեկում՝ ի նպաստ ՀՀ-ում ժողովրդավարական համապատասխան ինստիտուտների կայացմանը, ոլորտային խնդիրների վերհանմանը, հնարավոր կոռուպցիոն ռիսկերի չեզոքացմանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագիրն իրականացվել է 2022-2024թթ վերաբերող տեղեկատվական բաց աղբյուրներից ու շտեմարաններից, գնումների պլաններից, պետական պայմանագրերից և այլ տվյալների հավաքագրման, հարցումների և դրանց պատասխանների արդյունքում ստացված տեղեկությունների վերլուծության արդյունքում՝ այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման և ոլորտը կարգավորող այլ հարակից իրավական ակտերի ուսումնասիրություն՝ դրանք համադրելով ի թիվս այլնի՝ ներքոնշյալ կայէջերից արտահանված տեղակատվության հետ. - PPCM - Պայմանագրեր - https://www.moj.am/, - https://gnumner.minfin.am/, - https://minfin.am/hy, - https://armeps.am/epps/home.do, - https://www.e-gov.am/, - https://www.arlis.am/hy/:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են.

1. ՀՀ արդարադատության նախարարության 2024 թվականի բյուջեի, այդ թվում՝ կառուցվածքի վերաբերյալ տվյալների բաց աղբյուրներից հավաքագրում և ուսումնասիրություն:

2. 2024թ. պետական գնումների պայմանագրերի և դրանց հավելվածների ուսումնասիրություն և վերլուծություն, մասնավորապես, Ծրագրի շրջանակներում իրականացվել է Նախարարության և դրա ենթակայության տակ գտնվող մարմինների՝ բյուջեի հաշվին կատարված ընդհանուր թվով 50-ից ավելի պայմանագրերի ուսումնասիրություն (տե՛ս՝ պայմանագրերի ցանկը)՝ ինչպես «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերի կիրառմամբ կնքված պայմանագրեր, այնպես էլ ՀՀ ԱՆ ՊՈԱԿ-ներին և հիմնադրամներին տրամադրված պետական դրամաշնորհների (ԴՄ) և գնում չհանգիսացող ծախս (ԳՉԾ) համարվող պայմանագրեր: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ առավել խոշոր պայմանագրերը վերաբերում են ԴՄ-ներին և ԳՉԾ-ներին, ուստի ուսումնասիրվել են ոչ միայն 2024, այլ նաև 2022 և 2023թթ պետական դրամաշնորհների (ԴՄ) և գնում չհանգիսացող ծախս (ԳՉԾ) համարվող բոլոր պայմանագրերը:
3. Խոշոր ծախս համարվող որոշակի ապրանքատեսակի՝ համակարգչային տեխնիկայի ձեռք բերման ծախսերի 2022-2024թթ համեմատական վերլուծություն:

1.1 ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ (ՀԵՏԱՅՍՈՒ ՆԱԵՎ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ) ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ Նախարարության հրապարակած տվյալների՝ ՀՀ ԱՆ ընդհանուր փաստացի բյուջեն 2024 թվականին կազմել է **24 125 862,160** ՀՀ դրամ (կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ – **99,4%**), որը նախորդ՝ 2023 թվականի համեմատությամբ նվազել է 4,8 %-ով:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Նախարարության փաստացի բյուջեն 2023 թվականին կազմել է **25 337 536,700** ՀՀ դրամ (կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ – **99,4%**):

Համեմատական կարգով նշենք նաև, որ Նախարարության փաստացի բյուջեն 2022 թվականին կազմել է **23 191 004, 500** ՀՀ դրամ (կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ – **94,4%**):



«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Նախարարությունը 2024 թվականի ընթացքում բյուջեի հաշվին իրականացրել է թվով 8 ծրագրեր ***(*տես՝ թիվ 1 շրջանաձև դիագրամը)***, որոնցից ամենախոշորը կազմում են ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության գործունեության ապահովման գծով ծախսերը՝ Նախարարության ընդհանուր բյուջեի 58 %-ը:

Նախարարությունը 2024 թվականի ընթացքում բյուջեի հաշվին իրականացրել է թվով 8 ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի շրջանակներում նաև՝ համապատասխան թվով միջոցառումներ:

Ծրագրերից ամենախոշորը՝ ՀՀ ԱՆ ՔԿԾ գործունեության ապահովման գծով ծախսերն են, դրանք կազմում են Նախարարության ընդհանուր բյուջեի 58,1 %-ը, իսկ ամենափոքր տոկոսը կազմում են հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում ծրագրի գծով ծախսերը, ընդամենը՝ 1%-ից էլ քիչ /միջոցառում՝ Հակակոռուպցիոն դատարանի շենքային պայմանների բարելավում, ծախսը՝ 58 388 900 ՀՀ դրամ/:

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցում - 0.6 %
- Քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում - 9.5 %,
- Դատական և հանրային պաշտպանություն - 9.3 %
- Քրեակատարողական ծառայություններ - 58.1 %
- Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում - 5.1 %
- Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում - 1.9 %
- Հարկադիր կատարման ծառայություններ - 15.2 %
- Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում - 0,24 %

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

***Թիվ 1 շրջանաձև դիագրամ՝ Նախարարության 2024 թվականի ծրագրերի վերլուծություն**



2.1 ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նախ, հարկ է նշել, որ ըստ PPCM - Պայմանագրեր կայքէջում առկա տվյալների՝ 2022-2024թթ Նախարարության կողմից ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գծով ծախսերի ընդհանուր ծավալը հետևյալն է.

- 2022 թվական՝ 5 700 168 069 ՀՀ դրամ – ընդհանուր՝ 250 պայմանագիր,
- 2023 թվական՝ 4 899 163 424 ՀՀ դրամ – ընդհանուր՝ 197 պայմանագիր,
- 2024 թվական՝ 3 791 147 092 ՀՀ դրամ – ընդհանուր՝ 121 պայմանագիր:

Ըստ PPCM - Պայմանագրեր կայքէջում առկա տվյալների՝ 2022-2024թթ. Նախարարության կողմից ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գծով ծախսերի ընդհանուր ծավալը հետևյալն է.





«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Նախարարության վերոնշյալ ծախսերը 2022 թվականին իրականացվել են գնման հետևյալ ընթացակարգերով՝

- «Գնանշման հարցում» (ԳՀ)՝ 71 927 933 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 25 պայմանագիր
- «Մեկ անձից գնում» (ՄԱ)՝ 527 740 737 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 119 պայմանագիր
- «Հրատապ մեկ անձից գնում» (ՀՄԱ)՝ 30 440 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 3 պայմանագիր
- «Բաց մրցույթ» (ԲՄ)՝ 468 374 956 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 5 պայմանագիր
- «Հրատապ բաց մրցույթ» (ՀԲՄ)՝ 386 757 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 1 պայմանագիր
- «Երկփուլ մրցույթ» (ԵՓՄ)՝ 0 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 0 պայմանագիր
- «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ)՝ 880 825 242 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 83 պայմանագիր
- «Դրամաշնորհային մրցույթ» (ԴՄ)՝ 2 617 597 200 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 10 պայմանագիր
- «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ)՝ 716 505 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 4 պայմանագիր:

Նախարարության վերոնշյալ ծախսերը 2023 թվականին իրականացվել են գնման հետևյալ ընթացակարգերով՝

- «Գնանշման հարցում» (ԳՀ)՝ 22 624 584,45 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 16 պայմանագիր
- «Մեկ անձից գնում» (ՄԱ)՝ 547 801 248 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 109 պայմանագիր
- «Հրատապ մեկ անձից գնում» (ՀՄԱ)՝ 110 000 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 1 պայմանագիր
- «Բաց մրցույթ» (ԲՄ)՝ 112 686 800 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 6 պայմանագիր
- «Հրատապ բաց մրցույթ» (ՀԲՄ)՝ 8 592 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 1 պայմանագիր
- «Երկփուլ մրցույթ» (ԵՓՄ)՝ 0 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 0 պայմանագիր

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

- «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ)՝ 349 222 292 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 50 պայմանագիր
- «Դրամաշնորհային մրցույթ» (ԴՄ)՝ 2 513 028 500 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 11 պայմանագիր
- «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ)՝ 1 235 208 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 3 պայմանագիր:

Նախարարության վերոնշյալ ծախսերը 2024 թվականին իրականացվել են գնման հետևյալ ընթացակարգերով՝

- «Գնանշման հարցում» (ԳՀ)՝ 209 523 366 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 9 պայմանագիր
- «Մեկ անձից գնում» (ՄԱ)՝ 590 053 693 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 82 պայմանագիր
- «Հրատապ մեկ անձից գնում» (ՀՄԱ)՝ 0 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 0 պայմանագիր
- «Բաց մրցույթ» (ԲՄ)՝ 0 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 0 պայմանագիր
- «Հրատապ բաց մրցույթ» (ՀԲՄ)՝ 0 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 0 պայմանագիր
- «Երկփուլ մրցույթ» (ԵՓՄ)՝ 0 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 0 պայմանագիր
- «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ)՝ 30 283 633 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 20 պայմանագիր
- «Դրամաշնորհային մրցույթ» (ԴՄ)՝ 2 175 043 400 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 7 պայմանագիր
- «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ)՝ 966 243 000 ՀՀ դրամ - ընդհանուր՝ 3 պայմանագիր:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Նախարարության 2022-2024 թթ· ձեռքբերումների ծավալային ցուցանիշներն՝ ըստ գնման ընթացակարգերի



«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Այսպես.

Տվյալ դեպքում կարող ենք արձանագրել, որ օրինակ 2022 թվականի համեմատությամբ՝ 2024 թվականին Նախարարությունը կնքել է երկու անգամ ավելի քիչ պետական գնման պայմանագիր, որն ուղղակիորեն անդարադձել է նաև ծավալային ցուցանիշների վրա՝ բերելով դրանց 33,5 % անկման:

Բացի այդ, Նախարարության 2022-2024 թթ. ձեռք բերումների ծավալային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ կայուն նույնական ցուցանիշներ են ապահովել «Մեկ անձից գնում» (ՄԱ), «Դրամաշնորհային մրցույթ» (ԴՄ) և «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ) ընթացակարգերով, իսկ օրինակ՝ «Բաց մրցույթ» (ԲՄ), «Հրատապ բաց մրցույթ» (ՀԲՄ) և «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ) ընթացակարգերով առկա է էական տարբերություն՝ 2022 թվականի համեմատությամբ 2024 թվականին կիրառվել է կրկնակի անգամ պակաս, կամ առհասարակ չի կիրառվել:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ եթե կոնկրետ ընթացակարգի կիրառման համար օրենքով հստակ սահմանված են պայմաններ, ապա որևէ այլ ընթացակարգ չպետք է կիրառվի, քանի որ պետական մարմինը որպես պատվիրատու իրավասու չէ ընթացակարգերի ընտրության և/կամ կիրառելիության հարցում կամայականություններ թույլ տալ:

Այսինքն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթների՝ գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում: **Գնումները կարող են կատարվել նաև գնման այլ ձևերով, բացառապես օրենքով նախատեսված դեպքերում:**

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Օրինակ՝ եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը՝ 80 մլն դրամը, ապա պետք է կիրառվի «Գնանշման հարցում» (ԳՀ) ընթացակարգը, որը պետական գնումների արագացված և պարզեցված ձև է և կիրառվում է սահմանված արժեքային շեմերի շրջանակում:

Սակայն, եթե օրինակ՝ գնման առարկան ներառված է էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում, ապա անկախ գնից, այն պետք է իրականացվի «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ) ընթացակարգով:

Բացի այդ, հարկ է նշել, որ պետական դրամաշնորհների տրամադրումն ու (ԴՄ) ու գնում չհանգիսացող ծախսերը (ԳՉԾ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի ու ոլորտը կարգավորող հարակից այլ իրավական ակտերի իմաստով գնման ընթացակարգեր չեն հանդիսանում:

Այս համատեքստում հատուկ ուշադրության է արժանի այն, որ Նախարարության առավել խոշոր ձեռքբերումները 2022-2024թթ. իրականացվել են «Դրամաշնորհային մրցույթ» ընթացակարգի շրջանակներում կամ հանդիսացել են «Գնում չհանդիսացող ծախս»:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹԹ. ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ» (ԳՀ)

ՍՈՒՅՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԱՆ ՔԿԾ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ 2 ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.

1. ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանի և վարչական մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 պայմանագիր, որի գինը կազմել է 59 541 656 ՀՀ դրամ,

2. ՀՀ ԱՆ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացման թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-24/29 պայմանագիր, որի գինը կազմել է 3 407 070 ՀՀ դրամ:

Սույն պայմանագրերը կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ «Գնանշման հարցում» (ԳՀ) ընթացակարգի կիրառմամբ կնքված պայմանագրերի շրջանակներում:

«Գնանշման հարցում» (ԳՀ) ընթացակարգը պետական գնումների արագացված և պարզեցված ձև է, որը կիրառվում է սահմանված արժեքային շեմերի շրջանակում՝ այն դեպքում, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը՝ 80 մլն դրամը, իսկ հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն յոթ օրացուցային օր է:

1.1 ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ի մեկուսարանի և վարչական մասնաշենքի վերանորոգման աշխատանքների կատարման թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4 պայմանագրի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ.

Պայմանագրի Ծավալաթերթ-նախահաշիվը կազմված է թերություններով, չի համապատասխանում իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ ՀՀ Կառավարության՝ «ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման պահանջներին, մասնավորապես՝

- Ծավալաթերթ-նախահաշվում աշխատավարձերի արժեքն առանձնացված չէ,
- Յուրաքանչյուր աշխատատեսակի մեջ առանձնացված չեն նյութածախսերը, դրանց ծավալներն ու արժեքները:

Նախ, հարկ է նշել, որ Ծավալաթերթ-նախահաշվում, կատարման ենթակա աշխատանքների քանակական հատկանիշները բնութագրող 4-րդ հորիզոնական տողում նշված չէ, թե տվյալ բաժնին համապատասխան միավորի արժեքը /գինը/ ինչ չափման միավոր ունի, օրինակ՝ 1000 դրամ կամ ուղակի դրամ, **որը պրակտիկորեն բերում է գնի անորոշության ու իրավահարաբերության պահին գործող ՀՀ Կառավարության վերը նշված** **որոշման պահանջների խախտման** ***/*տես՝ նախահաշվի ձևն ըստ ՀՀ Կառավարության սահմանված կարգի/***:

Օրինակ՝ «Հատակներ» բաժնի 1-ի կետում նշված՝ խճի նախաշերտի իրականացում տողում՝ որպես չափման միավոր նշված է մ3, ծավալը՝ 5.014, միավորի արժեքը՝ 2, ընդամենը՝ 10.028 հազար դրամ, ու այս պայմաններում պարզ չէ, թե միավորի արժեքը՝ 2 ՀՀ դրամ է, 200, թե՝ 2000 ՀՀ դրամ:

Ի դեպ՝ նմանօրինակ խախտումները դիտվում են ամբողջ Ծավալաթերթ-նախահաշվում, ինչով պայմանավորված կարող ենք արձանագրել, որ այն կազմվել է էական խախտումներով:

Բացի այդ, Ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ «ԳՈՐԾՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՉԱՓԵՐԻ ԿԱՏԱԼՈԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 15.02.2008 թվականի թիվ 21-Ն հրամանով /հետայսու նաև՝ **Թիվ 21-Ն հրաման**/ սահմանված պահանջներին:

Այս առումով մեր կողմից հայտնաբերվեցին Պայմանագրով ձեռք բերման ենթակա աշխատանքների գնագոյացման համար հիմք հանդիսացած տվյալների ներքոնշյալ անհամապատասխանությունները, որոնք վերաբերում են աշխատավարձին և նյութի արժեքին:

Օրինակ՝ «Միջնորմեր» բաժնի 3-րդ կետում՝ շարվածքի ամրանավորում տողում որպես միավորի արժեք նշված է 330 /ենթադրաբար՝ 330.000 ՀՀ դրամ/ որպես աշխատավարձ:

Նույն բաժնի 4-րդ տողում՝ «միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-15 դասի բետոնից» որպես չափման միավոր է ընդունվել մ^3, ծավալը՝ 0.436, միավորի արժեքը ՝ 40 /ենթադրաբար՝ 40.000 ՀՀ դրամ/, ուստի տվյալ դեպքում պարզ չէ, թե 40.000 ՀՀ դրամը աշխատավարձն է, թե՞ B-15 դասի բետոնի արժեքը:

Նույն բաժնի 5-րդ տողում նշված է՝ «ամրան Φ12A500C արժեքը», չափման միավորը՝ տոննա, ծավալը՝ 0.08, միավորի արժեքը՝ 330 /ենթադրաբար՝ 330.000 ՀՀ դրամ/: Նույն խնդիրն առկա է 6-րդ տողում:

Այսպիսով, հայտնի չէ, թե շարվածքի ամրանավորման համար նախատեսված՝ ենթադրաբար 330.000 ՀՀ դրամը, արդյո՞ք վերաբերում է ամրանավորման համար նախատեսված աշխատավարձին, եթե այո, ապա իրատեսական չի կարող համարվել, քանի որ ՀՀ քաղաքաշինության նախարարի վերոնշյալ թիվ 21-Ն հրամանի՝ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ վերտառությամբ բաժնի Լ6.5 կետով **որպես տվյալ աշխատանքի վարձատրության չափ սահմանված է 34.560 ՀՀ դրամը:** Հարկ է նշել նաև, որ տվյալ դեպքում Ծավալաթերթ-նախահաշվում որպես նյութածախս ներառված չէ էլեկտրոդի և կապի լարի ծավալները և արժեքները:

Ավելին, եթե նույնիսկ պայմանականորեն ընդունենք, որ 2008 թվականից առ 2024 թվականն ընկած ժամանակահատվածում ենթադրաբար տեղի է ունեցել տվյալ աշխատանքի աշխատավարձի 100 տոկոս գնաճ, ապա նույնիսկ այդ պարագայում, <u>նշված աշխատանքի համար նախատեսված վարձաչափը չի կարող 330.000 ՀՀ դրամ կազմել:</u>

Բացի այդ, «Հատակներ» բաժնի 1-ին տողում - «խճի նախաշերտի իրականացում» նշված չեն խճի ֆրակցիայի չափերը, քանակը և խճի արժեքը: Նույն բաժնի 6-րդ տողում «Խրամուղու քանդում 4-րդ կարգի գրունտում» նշված չէ, թե ինչով է գրունտը քանդվում, ձեռքով, թե՞ մեքենա-մեխանիզմով և 1մ3 արժեքը՝ 1 /ենթադրաբար՝ 1000 ՀՀ դրամ/, Թիվ 21-Ն հրամանի համատեքստում պարզաբանման է ենթակա, թե ինչպես է գոյացել տվյալ գինն այս աշխատանքի կատարման համար:

Նույն բաժնի 10-րդ տող «Պարիսպի հիմքերի իրականացում միաձույլ B20 դասի ե/բետոնից պետք է լինի բետոնից» նշված չէ, ԲԵՏՈՆԸ թեթև է, թե ծանր բետոն է, 1մ3 արժեքը՝ 35 /ենթադրաբար՝ 35.000 ՀՀ դրամ/, տվյալ դեպքում պարզ չէ, թե սա աշխատանքի արժեքն է՞, թե B20 դասի բետոնի 1մ3-ի արժեքը: Հաշվարկում նշված չեն նաև ծախսված ամրանալարի և էլեկտրոդի քանակները և արժեքները:

Նույն բաժնի 15-րդ տող «200մմ լայնական հատույթի կտրվածքով կանոնավոր տիպի տուֆաքարի շարվածքով պարսպի կառուցում», 1մ3 արժեքը՝ 70 /ենթադրաբար՝ 70.000 ՀՀ դրամ/: Տվյալ դեպքում, եթե միայն 1մ3- ի աշխատանքի արժեքն է, եթե այո, ապա այս արժեքը ևս Թիվ 21-Ն հրամանի համատեքստում իրատեսական համարվել հնարավոր չէ: Նշենք նաև, որ նշված չեն թե տուֆաքարի, թե ց/ա շաղախի քանակները և արժեքները:

Նույն բաժնի 16-րդ տող «Շարվածքի ամրանավորում 6Aic ամրանային ցանցերով» չափման միավորը՝ տոննա, ծավալը՝ 0.03, միավորի արժեքը՝ 330 /ենթադրաբար՝ 330.000 ՀՀ դրամ/, **տվյալ դեպքում ևս հստակ չէ, թե միայն 1տն շարվածքի աշխատանքի արժե՞քն է 330.000 ՀՀ դրամ, եթե այո, ապա այս արժեքը ևս, Թիվ 21-Ն հրամանի համատեքստում գտնում ենք, որ իրատեսական չէ:** Նշենք նաև, որ ամրանային ցանցի քանակը և արժեքը հաշվարկում նշված չէ:

Բացի այդ, «Էլեկտրամատակարարում» բաժնի 2-րդ տող - «Ավտոմատ անջատիչների տուփի տեղադրում 15 տեղ» չափման միավորը՝ հատ, ծավալը՝ 2, միավորի արժեքը՝ 40 /ենթադրաբար՝ 40.000 ՀՀ դրամ/ տվյալ դեպքում անհասկանալի է, թե սա աշխատավարձի չափն է, թե՞ տեղադրման ենթակա տուփերի արժեքը, ուստի տվյալ դեպքում ևս, ի խախտումն Թիվ 21-Ն հրամանի՝ ավտոմատ անջատիչների տուփ արժեքներն ու աշխատավարձերն առանձին հաշվարկով ներկայացված չեն:

Բացի այդ, հարկ է նշել, որ 63Ա և 16Ա անջատիչներն իրարից էականորեն տարբեր ապրանքներ են, ուստի դրանց գները չեն կարող նույնը լինել: «Մոնտաժային աշխատանքներ» բաժնի 9-րդ տողում որպես **լոգարանային տաշտակի տեղադրման արժեք նշված է 35 /ենթադրաբար՝ 35.000 ՀՀ դրամ/, տվյալ դեպքում ևս, Թիվ 21-Ն հրամանի համատեքստում գտնում ենք, որ միայն տեղադրման աշխատանքների արժեքը իրատեսական չէ:**

«Մոնտաժային աշխատանքներ» բաժնի 14-րդ տողում որպես կերամիկական զուգարանակոնքի տեղադրման արժեք նշված է 35 /ենթադրաբար՝ 35.000 ՀՀ դրամ/, տվյալ դեպքում ևս, Թիվ 21-Ն հրամանի համատեքստում գտնում ենք, որ միայն տեղադրման աշխատանքների արժեքը իրատեսական չէ:

2.1 **ՀՀ ԱՆ վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացման թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-24/29 պայմանագրի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ.**

Պայմանագրի Ծավալաթերթ-նախահաշիվը կազմված է թերություններով, չի համապատասխանում իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ ՀՀ Կառավարության՝ «ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման պահանջներին, մասնավորապես՝

- Ծավալաթերթ-նախահաշվում աշխատավարձերի արժեքը առանձնացված չէ,
- Յուրաքանչյուր աշխատատեսակի մեջ առանձնացված չեն նյութածախսերը, դրանց ծավալներն ու արժեքները:

Նախ, հարկ է նշել, որ Ծավալաթերթ-նախահաշվում, կատարման ենթակա աշխատանքների քանակական հատկանիշները բնութագրող 4-րդ հորիզոնական տողում նշված չէ, թե տվյալ բաժնին համապատասխան միավորի արժեքը /գինը/ ինչ չափման միավոր ունի, օրինակ՝ 1000 դրամ կամ ուղակի դրամ, որը պրակտիկորեն բերում է գնի անորոշության ու

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ՀՀ Կառավարության վերը նշված որոշման պահանջների խախտման ***/*տես՝ նախահաշվի ձևն ըստ ՀՀ Կառավարության սահմանված կարգի/:***

Տվյալ դեպքում հարկ է փաստել, որ վարչական մասնաշենքի բոլոր սենյակներում իրականացված նորոգման աշխատանքների հաշվարկները ևս ներկայացված են ոչ պատշաճ ձևով: Մասնավորապես՝ բոլոր սենյակներում կատարված վերանորոգման աշխատանքների հաշվարկներում առանձին չեն ներկայացված աշխատավարձի և նյութածախսի ծավալներն ու արժեքները:

Օրինակ՝ երկրորդ հարկի թիվ 13, 23 և 24 սենյակներին վերաբերող տողերում որպես «Լամինատե հատակի տեղադրում, ներառյալ սպունգը և շրիշակները, լամինատի տեսակը և այլն» արժեք նշված է 8.900 ՀՀ դրամ, սակայն պարզ չէ, թե որքան է կազմում տեղադրման աշխատանքների արժեքը, որքան լամինատ և սպունգ է ծախսվել 19,2 քմ լամինատե հատակ իրականացնելու համար, ինչպես նաև՝ որքան են կազմում դրանց արժեքները առանձին-առանձին:

Բացի այդ, «Պատերի և առաստաղի ներկում լատեքսային ներկով» աշխատանքների տողերում նույնպես առանձին չեն ներկայացված, թե տվյալ աշխատանքների արժեքում որքան է կազմում աշխատանքի արժեքը, որքան նյութ՝ մածիկ, սոսնձաներկ և այլ նյութեր է ծախսվել տվյալ աշխատանքների համար, և ինչ արժեքով:

Ավելին, ամբողջ փաստաթղթում՝ «Պատերի և առաստաղի ներկում լատեքսային ներկով», «30 մմ հաստությամբ ցեմենտավազային հարթեցնող շերտ», «բետոնե նախապատրաստական շերտ», «խճի նախաշերտի իրականացում» և այլ հաշվարկային տողերում առանձնացված չեն թե՛ աշխատավարձի արժեքները, թե՛ նյութածախսի ծավալներն ու գները, այդ թվում՝ մածիկի, սոսնձաներկի, բետոնի, խճի և այլ նյութերի:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 21-Ն հրամանի համատեքստում հարկ է փաստել, որ վերոնշյալ պայմանագրերով ձեռքբերման ենթակա աշխատանքների գնագոյացման համար հիմք հանդիսացած տվյալների մեջ սույն զեկույցով արձանագրված անհամապատասխանություններն ու խախտումները էական են և փաստացի հանգեցրել են այն բանին, որ սույն ընթացակարգերի շրջանակներում կատարված ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ դատողություններ անելը դարձել է անհնարին և կասկածահարույց:

«Մեկ անձից գնում» (ՄԱ)

ՍՈՒՅՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ԱՆ ՊԾ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ 3 ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.

1. Էլեկտրոնային համակարգերի սպասարկման և թվայնացման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-4ԾՍ-24/03 պայմանագիր, որի գինը կազմել է 105 600 000 ՀՀ դրամ,

2. ՀՀ ԱՆ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-24/20 պայմանագիր, որի գինը կազմել է 506 000 ՀՀ դրամ,

3. ՀՀ ԱՆ ՊԾ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀՊԾ-ՄԱԾՁԲ-24/03 պայմանագիր, որի գինը կազմել է 126 500 ՀՀ դրամ:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Սույն պայմանագրերը կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգի կիրառմամբ կնքված պայմանագրերի շրջանակներում:

1.1 Էլեկտրոնային համակարգերի սպասարկման և թվայնացման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-4ԾՍ-24/03 պայմանագրի վերաբերյալ.

Պայմանագիրն իրականացվել է «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգի կիրառմամբ:

Այս ընթացակարգը պետական գնումների բացառիկ ձև է, որի դեպքում պատվիրատուն պայմանագիր է կնքում մեկ ընտրված մասնակցի հետ՝ առանց մրցութային գործընթաց իրականացնելու: Այն կիրառվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված հատուկ հիմքերով, օրինակ՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով.

4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը.

5) գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Այսպես.

Սույն պայմանագիրը կատարվել է «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի կողմից, որի գինը կազմել է 105 600 000 ՀՀ դրամ:

Էլեկտրոնային համակարգերի սպասարկման և թվայնացման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-4ԾՍ-24/03 պայմանագրով ձեռք բերված ծառայություններն ընդգրկում են միաժամանակ մի քանի էլեկտրոնային հարթակների սպասարկում՝ www.e-civil , www.e-apostille , www.e-verify , www.e-health, այն է՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ էլեկտրոնային ռեգիստրի համակարգի, ՀՀ ԱՆ ապոստիլի միասնական էլեկտրոնային գրանցամատյանի համակարգի, ՀՀ պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի, ՀՀ ԱՆ ծննդյան, մահվան և պերինատալ մահվան բժշկական վկայականների միասնական ռեգիստրի տեղեկատվական-որոնողական ավտոմատացված համակարգերի ծրագրային, թվայնացման, տեխնիկական և խորհրդատվական սպասարկման ծառայությունների մատուցումը:

Տվյալ դեպքում, թեպետ պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը՝ 1 մլն ՀՀ դրամը, այնուամենայնիվ, ծառայությունների ձեռքբերումն իրականացվել է «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգով՝

պայմանավորված «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊ ընկերության՝ հիշյալ էլեկտրոնային համակարգերի նկատմամբ հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:

2.1 ՀՀ ԱՆ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-24/20 պայմանագրի վերաբերյալ.

Սույն պայմանագիրը ևս, իրականացվել է «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգի կիրառմամբ, որի առարկան է հանդիսացել ՀՀ ԱՆ թվով 39 աշխատակիցների եռօրյա վերապատրաստման ծառայությունների մատուցումը:

Սույն պայմանագիրը կատարվել է «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊՈԱԿ-ի կողմից, որի գինը կազմել է 506 000 ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում ուսումնասիրելով պայմանագրի հավելված կազմող տեխնիկական բնութագիրը, հարկ է նշել, որ «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգի կիրառումը պայմանավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված այն հիմքով, որ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը՝ 1 մլն ՀՀ դրամը:

3.1 ՀՀ ԱՆ ՊԾ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման թիվ ՀՀՊԾ-ՄԱԾՁԲ-24/03 պայմանագրի վերաբերյալ.

Սույն պայմանագիրը ևս, իրականացվել է «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգի կիրառմամբ, որի առարկան է հանդիսացել ՀՀ ԱՆ ՊԾ թվով 11 աշխատակիցների եռօրյա վերապատրաստման ծառայությունների մատուցումը:

Սույն պայմանագիրը կատարվել է «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊՈԱԿ-ի կողմից, որի գինը կազմել է 126 500 ՀՀ դրամ:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Տվյալ դեպքում ուսումնասիրելով պայմանագրի հավելված կազմող տեխնիկական բնութագիրը, հարկ է նշել, որ «Մեկ անձից գնում» (ՄԱ) ընթացակարգի կիրառումը պայմանավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված այն հիմքով, որ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

Այս առումով թերևս հարց է առաջանում. եթե Նախարարությունը «Վերապատրաստման ծառայություններ» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-02/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ին տրամադրել է 249 453 700 ՀՀ դրամ, ապա ինչով է պայմանավորված որոշակի թվով աշխատակիցների վերապատրաստման կազմակերպումը «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊՈԱԿ-ի միջոցով:

«Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ)

ՍՈՒՅՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀՀ ԱՆ ՔԿԾ, ՀՀ ԱՆ ՊԾ և ՀՀ ԱՆ ՀԿԱԾ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ՝ 2022-2024 ԹԹ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.

Միաժամանակ, հաշվի առնելով, որ համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը հանդիսացել է առավել խոշոր ծախս, ստորև ներկայացվում է նաև Նախարարության և իր ենթակայության տակ գործող մարմինների կողմից համակարգչային տեխնիկայի ձեռք բերման ծախսերի գծով 2022-2024թթ համեմատական վերլուծություն /պայմանագրերի ցանկը՝ տես հավելվածում.

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Նախարարության և իր ենթակա մարմինների կողմից համակարգչային տեխնիկայի՝ համակարգիչների (մոնոբլոկ, պլանշետ, դյուրակիր համակարգիչ, մոնիտոր) և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի (տպիչ, պատճենահանող, սկաներ) ձեռքբերման ծախսերի գծով 2022-2024թթ համեմատական վերլուծություն



«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Սույն պայմանագրերով ձեռքբերումներն իրականացվել են «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ) ընթացակարգով:

«Էլեկտրոնային աճուրդը» (ԷԱՃ) պետական գնումների ընթացակարգ է, որը իրականացվում է առցանց հարթակում՝ ապահովելով թափանցիկ, մրցակցային և ավտոմատացված գործընթաց: Այն հնարավորություն է տալիս մասնակիցներին ներկայացնել իրենց առաջարկները մրցակցային ձևով, իջեցնելով գինը, ապահովում հստակ ժամկետներ, ստանդարտացված պահանջների համապատասխանություն և բարձր մակարդակի հաշվետվողականություն, ինչն ապահովում է ֆինանսական արդյունավետություն և նվազեցնում սուբյեկտիվության ռիսկերը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ էլեկտրոնային ձևով գնումներն իրականացվում են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

Տվյալ դեպքում ուսումնասիրելով պայմանագրերի հավելված կազմող տեխնիկական բնութագրերը, հարկ է նշել, որ «Էլեկտրոնային աճուրդ» (ԷԱՃ) ընթացակարգի կիրառումը պայմանավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված՝ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակում ընդգրկված լինելու հանգամանքով:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

2022-2024 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ (ԴՄ) ԵՎ ԳՆՈՒՄ ՉՀԱՆԳԻՍԱՑՈՂ ԾԱԽՍ (ԳՉԾ) ՀԱՄԱՐՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.

Ըստ PPCM - Պայմանագրեր և ՊՈԱԿ-ների ֆինանսավորում - Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարում | e-gov կայքէջերում առկա տվյալների՝

ՀՀ ԱՆ ՊՈԱԿ-ներին և հիմնադրամներին Նախարարության կողմից տրամադրված պետական դրամաշնորհները կազմում են՝

2022 թվականին՝ **2 617 597 200 ՀՀ դրամ**, որը կազմում է տվյալ տարվա բյուջեի **11,2 %**-ը,

2023 թվականին՝ **2 513 028 500 ՀՀ դրամ**, որը կազմում է տվյալ տարվա բյուջեի **9,6 %**-ը,

2024 թվականին՝ **2 175 043 400 ՀՀ դրամ**, որը կազմում է տվյալ տարվա բյուջեի գրեթե **9 %**-ը:

«Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ) ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերը կազմում են՝

2022 թվականին՝ **716 505 000 ՀՀ դրամ,** որը կազմում է տվյալ տարվա բյուջեի **3 %**-ը,

2023 թվականին՝ **1 235 208 000 ՀՀ դրամ**, որը կազմում է տվյալ տարվա բյուջեի **5 %**-ը,

2024 թվականին՝ **966 243 000 ՀՀ դրամ,** որը կազմում է տվյալ տարվա բյուջեի գրեթե **4 %**-ը:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

2022-2024 թթ. պետական դրամաշնորհների (ԴՄ) և գնում չհանդիսացող ծախս (ԳՉԾ) համարվող պայմանագրերի վերլուծություն՝ ըստ armeps.am և e-gov.am կայքէջերում առկա տվյալների՝



«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«Դրամաշնորհային մրցույթ» (ԴՄ)

Այսպես. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ և ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ Կառավարության 24.12.2003 թ. N 1937-Ն որոշման համաձայն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին դրամաշնորհ տրամադրվում է նույն կարգի համաձայն կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա:

Կարգի իմաստով՝ դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է: Կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է Կարգի համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով: Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն կազմակերպությունները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Դրամաշնորհի հատկացման նպատակով՝ տվյալ պետական մարմնի ղեկավարը կազմավորում է մրցույթի հանձնաժողով: Հանձնաժողովը՝

- գործում է մինչև պայմանագրով կողմերի համար սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը.

- հետևում է պայմանագրի կողմի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ.

- ղեկավարին ներկայացնում է եզրակացություն՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունելու մասին:

Տվյալ ընթացակարգը հնարավորություն է տալիս արագ կազմակերպել խոշոր ծավալի գնումներ, սակայն ունի մի շարք թերություններ: Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա: Հանձնաժողովն է ընդունում որոշում այն կազմակերպության մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր, և այն կազմակերպության մասին, որի հետ չի կարող կնքվել նման պայմանագիր: Դա նշանակում է, որ կազմակերպության ընտրության չափորոշիչները կարող են լինել ոչ ստանդարտացված կամ սուբյեկտիվ: **Այս բոլոր գործոնները ցույց են տալիս, որ «Դրամաշնորհային մրցույթ» ընթացակարգը, չնայած իր արագությանը և կիրառելիությանը, որոշակի դեպքերում պահանջում է էլ ավելի խիստ վերահսկողական մեխանիզմներ և թափանցիկության բարձրացում:**

Ստորև ներկայացվում է վերոնշյալ դրամաշնորհների տրամադրման պայմանագրերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված հետևյալ շեղումները.

ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022-2024 ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ.

1. «Արխիվային ծառայություններ» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-03/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 599 474 400 ՀՀ դրամ,

2. «Դատական և հանրային պաշտպանություն» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-1/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» Հիմնադրամին տրամադրվել է 445 400 500 ՀՀ դրամ,

3. «Թարգմանչական ծառայություններ» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-06/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «ՀՀ ԱՆ թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 260 769 800 ՀՀ դրամ,

4. «Վերապատրաստման ծառայություններ» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-02/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 249 453 700 ՀՀ դրամ,

5. «Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-05/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 197 652 000ՀՀ դրամ,

6. «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-04/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 175 211 500 ՀՀ դրամ,

7. «Աջակցություն օրենսդրական զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանը» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-07/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ)

պայմանագրով «Օրենսդրական զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամին տրամադրվել է 267 611 500 ՀՀ դրամ:

Այսպես.

«Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-05/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրի գինը կազմել է 197 652 000 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 187 122 000 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 120 439 410 ՀՀ դրամով:

Նմանօրինակ շեղում արձանագրվել է նաև «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-04/24 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրի մասով, որտեղ, պայմանագրի գինը կազմել է 175 211 500 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 175 211 500 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 65 849 700 ՀՀ դրամով:

«Արխիվային ծառայություններ» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-01/23 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրի մասով, որտեղ, պայմանագրի գինը կազմել է 596 474 400 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 607 099 500 ՀՀ դրամ, սակայն,

պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 596 474 400 ՀՀ դրամով:

«Դատական և հանրային պաշտպանություն» միջացառման շրջանակներում թիվ ՀՀ ԱՆԴՄ-10/23 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրի գինը կազմել է 351 739 400 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 301 739 400 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունները բացակայում են բաց աղբյուրներում ու շտեմարաններում:

«Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» միջացառման շրջանակներում Նպաստի տրամադրման թիվ ՀՀԱՆԳՉԾ-02/23 գնում չհանդիսացող ծախս համարվող (ԳՉԾ) պայմանագրի գինը կազմել է 66 669 000 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 53 193 030 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 47 042 887 ՀՀ դրամով:

«Հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-06/23 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրի գինը կազմել է 197 652 000 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 197 652 000 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 164 817 900 ՀՀ դրամով:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԴՄ-07/23 դրամաշնորհի տրամադրման (ԴՄ) պայմանագրի գինը կազմել է 175 211 500 ՀՀ դրամ, պայմանագրի գինը համաձայնագրով փոփոխվել է և կազմել է 203 270 800 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 203 270 800 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 67 596 660 ՀՀ դրամով:

«Փորձաքննությունների կատարման ծառայություններ» միջացառման շրջանակներում թիվ ՀՀԱՆԳՀԾ-2022-1 գնում չհանդիսացող ծախս համարվող (ԳՀԾ) պայմանագրի գինը կազմել է 577 494 000 ՀՀ դրամ, Նախարարության կողմից հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ՝ նշվել է 716 075 000 ՀՀ դրամ, սակայն, պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրի առարկան փաստացի ի կատար է ածվել 577 494 000 ՀՀ դրամով:

Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ Նախարարության կողմից ՊՈԱԿ-ների ֆինանսավորման պայմանագրերի գծով, հրապարակված բյուջեի հաշվետվությունում որպես արդյունքային ցուցանիշ նշված ինչպես 2022, այնպես էլ 2023 և 2024թթ տվյալները ակնհայտորեն չեն համապատասխանում պայմանագրի հավելված հանդիսացող հանձնման-ընդունման արձանագրություններում ներառված տվյալներին:

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Դրամաշնորհների տրամադրման պայմանագրերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված շեղումները

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՎԱԼԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ	ԸՍՏ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	ԾԱՎԱԼԸ՝ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ
«Արխիվային ծառայություններ» (2023 թ.)	596 474 400	596 474 400	607 099 500
«Դատական և հանրային պաշտպանություն» (2023 թ.)	351 739 400	—	301 739 400
«Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» (2023 թ.)	66 669 000	47 042 887	53 193 030
«Փորձաքննությունների կատարման ծառայություններ» (2022 թ.)	577 494 000	577 494 000	716 075 000
«Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» (2024 թ.)	197 652 000	120 439 410	187 122 000
«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» (2024 թ.)	175 211 500	65 849 700	175 211 500
«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում» (2023 թ.)	203 270 800	67 596 660	203 270 800
«Հատուկ ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» (2023 թ.)	197 652 000	164 817 900	197 652 000

«Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ)

ՍՈՒՅՆ ԲԱԺՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԹԻՎ ՀՀԱՆ-ԳՉԾ-2024-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է «ՀՀ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ՝ «ԳՆՈՒՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԾԱԽՍ» (ԳՉԾ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ, ՈՐԻ ԳԻՆԸ ԿԱԶՄԵԼ Է 966 043 000 ՀՀ ԴՐԱՄ:

Սույն պայմանագիրը Նախարարության 2024 թվականի պայմանագրերից ամենախոշորն է:

Նախ, հարկ է նշել, որ «Գնումների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքները, պետական ֆինանսական կառավարման ոլորտը կարգավորող հարակից օրենքները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի №526-Ն որոշումը չի սահմանում գնում չհանդիսացող ծախս «ընթացակարգ», սակայն նման պայմանագրերը ևս ներառված են Armeps համակարգում՝ որպես «Գնում չհանդիսացող ծախս» անվանումով ընթացակարգ:

Այսպես. «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ) ընթացակարգը սահմանված է ՀՀ Կառավարության՝ «ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 15 հունիսի 2018 թվականի N 706-Ն որոշմամբ:

Ըստ վերոնշյալ որոշման պահանջների՝ «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՉԾ) են համարվում բյուջեների հետևյալ ծախսատեսակները՝

- նախորդ տարիների բյուջեների կատարման ընթացքում ստանձնած պարտավորությունների դիմաց առաջացած պարտքերի մարմանն ուղղվող ծախսերը.

- միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման գծով ծախսերը.
- հսկիչ գնումներով կատարվող ծախսերը.
- **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործարքների գծով ծախսերը.**
- **կանխիկ և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների գծով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով հաստատված ծախսերը.**
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարվող գնումների գծով ծախսերը:

Թիվ ՀՀԱՆ-ԳՀԾ-2024-1 պայմանագրի դեպքում, հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության բովադակությունը որոշվում է փորձաքննությունը նախաձեռնողի (**դատարաններ, քրեական հետապնդում կամ վարչական վարույթ իրականացնող մարմիններ**)՝ տվյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ, թիվ ՀՀԱՆ-ԳՀԾ-2024-1 պայմանագրով «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՀԾ) ընթացակարգի կիրառումը պայմանավորված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործարքների գծով ծախսերի անհրաժեշտությամբ, այն է՝ (…) 2) **օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերում.** (…):

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի այն, որ «Գնում չհանդիսացող ծախս» (ԳՀԾ) ընթացակարգը՝ «Գնումների մասին» օրենքի իմաստով, իր կիրառմամբ նման է «Մեկ անձից գնում» կամ «Հրատապ մեկ անձից գնում» ընթացակարգերին, սակայն հարկ է նշել, որ ԳՀԾ-ի դեպքում պատվիրատուները չեն կրում ձեռք բերման անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականություն, որը միանշանակ Պատվիրատուների կողմից գործընկեր կազմակերպության ընտրության հարցում կարող

է բերել կամայականությունների, ուստի գտնում ենք, որ սույն ընթացակարգերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը լրջագույն խնդիր է, քանի որ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր:

2022-2024 թթ. պետական դրամաշնորհների (ԴՄ) և գնում չհանդիսացող ծախս (ԳՉԾ) համարվող պայմանագրերի կառուցվածքն՝ ըստ միջոցառումների



* Նախարարությունը 2022-2024թթ մասնավոր սեկտորին դրամաշնորհ չի տրամադրել
* Ներկայացված են թվով 38 պայմանագրերի տվյալներ
* Պայմանագրերի գումարները նշված են առկա ֆինանսական միջոցներով (փաստացի)

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Բացի այդ, տվյալ դեպքում հաշվի առնելով նաև, որ ՀՀ Կառավարության՝ «ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 15 հունիսի 2018 թվականի N 706-Ն որոշման համաձայն՝ **բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների հաշվին ձեռքբերումները չեն իրականացվում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների շրջանակում, չեն ենթարկվում որևէ տեսակի վերահսկողական մեխանիզմների, ապա կարող ենք փաստել, որ այս միջոցները բաց են թողնված ազատ շրջանառության /չափաքանակները տե՛ս ստորև նեկայացված դիագրամում/:**

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն, որ եթե օրինակ՝ 2016-2018 թթ դրությամբ այդ միջոցները Կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով, հնարավոր էր ուղղել միայն արտասահմանյան գործուղումների գծով ծախսերին, ապա **2019 թվականից ներառյալ՝ առ այսօր, դրանց հաշվին հնարավոր է ձեռք բերել համարյա ամեն ինչ, ներառյալ՝ սնունդ, հագուստ, ներկայացուցչական տարատեսակ բարիքներ, թանկարժեք իրեր, ինչպես նաև դրանց մեջ կարելի է ներառել վերանորոգման աշխատանքներ, ավտոմեքենաների սպասարկման ու պահպանման, ինչպես նաև ընթացիկ այլ ծախսեր :**

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

2018-2024թթ. ՀՀ պետական բյուջեով առանձին մարմինների համար նախատեսված հատկացումների հաշվին բանկային վճարային քարտերով և կանխիկ ձևով շրջանառվող միջոցների չափաքանակները





ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ, ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համատարած բնույթ է կրում https://www.armeps.am/ppcm/public/procurements կայքէջում պետական մարմինների կողմից պայմանագրերի հավելված հանդիսացող փաստաթղթերի, մասնավորապես՝ հանձնման-ընդունման արձանագրությունների, և/կամ պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու մասին ակտերի, հարկային հաշիվների չտեղադրելը: Այս առումով ինչպես Նախարարությունը, այնպես էլ Նախարարությանը ենթակա մարիները ևս, դրանք չեն տեղադրում նշված կայքէջում, ինչն **էականորեն դժվարացնում է պայմանագրերի արդյունքն ընդունված լինել/չլինելու, այսինքն՝ պայմանագիրն ամբողջապես կամ մասամբ կատարված լինելու վերաբերյալ դատողություններ անելը, ինչն էլ իր հերթին փաստացի բերում է հաշվետվողականության և գնման գործընթացների թափանցիկության սկզբունքների խախտման:**

- Պայմանագրերի հավելվածներիը պատշաճ հրապարակող մարմիններից է՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն
- Մասամբ հրապարակող մարմիններն են՝ Վարչապետի աշխատակազմը, նախարարությունները,
- Առհասարակ չհրապարակող մարմինը՝ ՀՀ օրենսդիր մարմինն է՝ Ազգային ժողովի աշխատակազմը:

Առաջարկ 1.

* **Այս առումով առաջարկում ենք Լիազոր մարմնին կատարելագործել և ուժեղացնել վերահսկողական մեխանիզմները, ինչպես նաև նախատեսել պատասխանատվության կառուցակարգեր:**

2. Ծրագրի ուսումնասիրության առարկա հանդիսացած շինարարական աշխատանքների երկու պայմանագրերի հավելված հանդիսացող Ծավալաթերթ-նախահաշիվները չեն համապատասխանում հետևյալ իրավական ակտերի պահանջներին.

- ՀՀ Կառավարության՝ 23.06.2011 թվականի N 879-Ն որոշում
- ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 15.02.2008 թվականի թիվ 21-Ն հրաման

Գտնում ենք, որ ցանկացած գնման ընթացակարգում՝ հրավերին կից տեխնիկական բնութագրում առկա նմանատիպ անհամապատասխանություններն ու անհստակությունները որպես խախտման տեսակ՝ էական են, ու բացի այն, որ փաստացի կասկածի տակ են դնում ինչպես տվյալ ընթացակարգի շրջանակներում կատարված ծախսերի արդյունավետությունն ու գնագոյացումը, նաև հանգեցնում են ազատ մրցակցության սկզբունքի խախտման:

Առաջարկ 2.

* Միջոցներ ձեռնարկել ոչ միայն տեխնիկական բնութագրեր կազմող մասնագետների կարողությունների զարգացման ուղղությամբ, այլ նաև այն աշխատակիցների, որոնք պատասխանատու են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդունման գործընթացների համար:

* Հաշվի առնելով 2008 թվականից առ այսօր ՀՀ-ում տեղի ունեցած համարյա բոլոր ոլորտներում թանկացումներն ու գնաճը՝ անհրաժեշտ ենք համարում հանդես գալու համապատասխան առաջարկությամբ, քննարկելու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ «ԳՈՐԾՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՎԱՓԵՐԻ ԿԱՏԱԼՈԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 15.02.2008 թվականի թիվ 21-Ն հրամանում փոփոխություններ կատարելու հնարավորությունը:

3. **Հաշվի առնելով, որ բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների հաշվին ձեռքբերումները չեն իրականացվում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների շրջանակում, չեն ենթարկվում որևէ տեսակի վերահսկողական մեխանիզմների, ապա կարող ենք փաստել, որ այս միջոցները բաց են թողնված ազատ շրջանառության:**

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն, որ եթե օրինակ՝ 2016-2018 թթ դրությամբ այդ միջոցները Կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով, հնարավոր էր ուղղել միայն արտասահմանյան գործուղումների գծով ծախսերին, ապա **2019 թվականից ներառյալ՝ առ այսօր, դրանց հաշվին հնարավոր է ձեռք բերել համարյա ամեն ինչ, ներառյալ՝ սնունդ, հագուստ, ներկայացուցչական տարատեսակ բարիքներ, թանկարժեք իրեր, ինչպես նաև դրանց մեջ կարելի է ներառել վերանորոգման աշխատանքներ, ավտոմեքենաների սպասարկման ու պահպանման, ինչպես նաև ընթացիկ այլ ծախսեր:**

Առաջարկ 3.

*** Իրականացնել ավելի խորքային ուսումնասիրություն՝ առաջարկելով Կառավարությանն ու Լիազոր մարմնին՝ ներկայացնելու հիմնավոր բացատրություններ առ այն, թե ինչով է պայմանավորված ՀՀ պետական բյուջեով առանձին մարմինների համար նախատեսված հատկացումների հաշվին բանկային վճարային քարտերով և կանխիկ ձևով շրջանառվող միջոցների չափաքանակների 2018 թվականից առ այսօր նման գերաճն ու դասակարգիչների ընտրությունն ու ըստ գերատեսչությունների՝ նաև դրանց տարբերությունները:**

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿԸ.

- «Գնումների մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
- ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշում
- ՀՀ Կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշում
- ՀՀ բաղաբաշինության նախարարի 15 փետրվարի 2008 թ. N 21-Ն հրաման
- ՀՀ Կառավարության 18 մայիսի 2017 թվականի N 534-Ն որոշում
- ՀՀ Կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի N 1937-Ն որոշում

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՀԱՐԹԱԿՆԵՐ.

- ARMEPS (https://www.armeps.am/epps/home.do)
- Gnumner.am (https://gnumner.minfin.am/)
- ՀՀ Ֆինանսների նախարարության կայք (https://minfin.am/hy)
- ARLIS (https://www.arlis.am/hy/)
- ՀՀ էլեկտրոնային կառավարում կայք (https://www.e-gov.am/)

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ.

ՀՀ արդարադատության նախարարության (ՀՀ ԱՆ) և իր ենթակայության տակ գործող մարմինների կողմից համակարգչային տեխնիկայի ձեռք բերման պայմանագրերը

ՀՀ ԱՆ՝ 2022 թ.

1. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՏ-22/51-1
2. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՏ-22/51-2
3. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽՏ-22/40-2
4. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽՏ-22/40-1
5. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/38-1
6. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽՏ-22/37-3
7. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽՏ-22/37-2
8. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-ԲԴԽՏ-22/48-1
9. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/44-1
10. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/57-2
11. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/57-1
12. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/60-2

ՀՀ ԱՆ՝ 2023 թ.

13. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/37-3
14. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/37-1
15. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/23-1

16. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/23-2
17. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/23-2

ՀՀ ԱՆ՝ 2024 թ.

18. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-1
19. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-2
20. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/16-1
21. ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/16-2

ՀՀ ԱՆ ՀԿԱԾ՝ 2022 թ.

22. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/49-1
23. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/46-1
24. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/26-1
25. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/54-3
26. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/59-1
27. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/68-1

ՀՀ ԱՆ ՀԿԱԾ՝ 2023 թ.

28. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/53-1
29. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/53-2
30. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/16-1

ՀՀ ԱՆ ՀԿԱԾ՝ 2024 թ.

31. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-3

32. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/25-1
33. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/26-1
34. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/38-1
35. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/36-3
36. ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/36-1

ՀՀ ԱՆ ՔԿԾ՝ 2022 թ.

37. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/31
38. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-2
39. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/30-1

ՀՀ ԱՆ ՔԿԾ՝ 2023 թ.

40. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/11-2

ՀՀ ԱՆ ՔԿԾ՝ 2024 թ.

41. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20-1
42. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20-2
43. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20-4
44. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/20-5

ՀՀ ԱՆ ՊԾ՝ 2022 թ. - 0

ՀՀ ԱՆ ՊԾ՝ 2023 թ. - 0

ՀՀ ԱՆ ՊԾ՝ 2024 թ.

45. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-2

46. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-3
47. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/12-1
48. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-1
49. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-2
50. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/10-1
51. ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/10-2
52. ՀՀՊԾ-ՄԱԾՁԲ-24/03

ԳՆՈՒՄ ՉՀԱՆԳԻՍԱՑՈՂ ԾԱԽՍ» (ԳՉԾ)

ՀՀ ԱՆ՝ 2022 թ.

53. ՀՀԱՆ-ԳՉԾ-2022-1
54. ՀՀԱՆ-ԳՉԾ-2022-2
55. ԳՉԾ 1-ՏՄ
56. ԳՉԾ 2-ՏՍ

ՀՀ ԱՆ՝ 2023 թ.

57. ՀՀԱՆ-ԳՉԾ-2023-1
58. ԳՉԾ-3-ՏՍ
59. ԳՉԾ-4-ՏՄ

ՀՀ ԱՆ՝ 2024 թ.

60. ՀՀԱՆ-ԳՉԾ-2024-1
61. ԳՉԾ-24-ՏՍ

62. ԳՉԾ-24-ՏՄ

«ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ» (ԳՀ)

63. ՀՀ ԱՆ՝ 2022 թ. -0
64. ՀՀ ԱՆ՝ 2023 թ. -0
65. ՀՀ ԱՆ՝ 2024 թ.
66. ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-24/29
67. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-24/4

«ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ» (ԴՄ)

ՀՀ ԱՆ՝ 2022 թ.

68. ՀՀԱՆ ԴՄ-03
69. ՀՀԱՆ ԴՄ-08
70. ՀՀԱՆԴՄ-07
71. ՀՀԱՆ ԴՄ-1
72. ՀՀԱՆ ԴՄ-
73. ՀՀԱՆ ԴՄ-2
74. ՀՀԱՆ-ԴՄ-2022-3
75. ՀՀԱՆ-ԴՄ-05
76. ՀՀԱՆ-ԴՄ-06
77. ՀՀԱՆ-ԴՄ-04

ՀՀ ԱՆ՝ 2023 թ.

78. ՀՀԱՆԴՄ-07/23
79. ՀՀԱՆԴՄ-06/23
80. ՀՀԱՆԴՄ-11/23
81. ՀՀԱՆԴՄ-02/23
82. ՀՀԱՆԴՄ-10/23
83. ՀՀԱՆԴՄ-03/23
84. ՀՀԱՆԴՄ-05/23
85. ՀՀԱՆԴՄ-01/23
86. ՀՀԱՆԴՄ-04/23
87. ՀՀԱՆԴՄ-08/23
88. ՀՀԱՆԴՄ-12/23

ՀՀ ԱՆ՝ 2024 թ.

89. ՀՀԱՆԴՄ-03/24
90. ՀՀԱՆԴՄ-1/24
91. ՀՀԱՆԴՄ-06/24
92. ՀՀԱՆԴՄ-02/24
93. ՀՀԱՆԴՄ-05/24
94. ՀՀԱՆԴՄ-04/24
95. ՀՀԱՆԴՄ-07/24

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

«ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

Կատարողներ՝

Ծրագրի ղեկավար՝ Թերեզա Գալստյան

Ծրագրի համակարգող՝ Էլիտա Բաբայան

Ծրագրի երտասարդ մասնագետ՝ Անի Խաչատրյան